ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ
ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

«18» ապրիլի 2019թ. ՁԱՀ-261

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
HETQ.am-ի լրագրող
ՏԻՐԱՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մուրադյան

Ի պատասխան «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությանն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ուղղված Ձեր 2019 թվականի ապրիլի 2-ի գրության (մուտքագրվել է 02.04.2019թ. 261 համարով)՝ հայտնում եմ.

1. հոլտեր մոնիթորինգը համընդհանուր ձևակերպում է, որը ներառում է էլեկրոֆիզիոլոգիական և գործիքային ախտորոշումը, հոլտեր սրտի աշխատանքի, արտագրման երկարատև գրանցում կատարող սարքավորում է, որն անվանում են նաև էլեկտրոսրտագրման ամբուլատոր մոնիթորինգ սարքավորում, որն ունի չափագիտական բնութագիր: Համաձայն «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի «Օրենսդրական չափագիտության հսկողության ենթական չափման միջոցների ցանկը սահմանելու մասին» N 113-Ն որոշման՝ սրտի հոլտեր մոնիթորինգի սարքը (նշված է կոնկրետ էլեկտրակարդիոգրաֆ) համարվում է առողջապահության բնագավառի չափագիտության հսկողության ենթակա չափման միջոց և ենթակա է պարտադիր պարբերական ստուգաչափման:

2. ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման ընդունումից հետո «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության կողմից սահմանված կարգով մինչև օրս հոլտեր սարք ստուգաչափվել է 27.06.2016 թվականին Կապանի բժշկական կենտրոնում և 25.01.2018 թվականին «Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում՝ թվով 2 հատ:

Համաձայն ՀՀ կառավարության 2006թ. մարտի 9-ին № 351-Ն «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը հաստատելու մասին» հաստատված որոշման՝ արխիվային փաստաթղթի պահպանության ժամկետը 5 տարի է, հետևաբար՝ Ձեզ կարող ենք տրամադրել տեղեկատվություն 2014 թվականից սկսած:

Հայտնում եմ Ձեզ, որ 25.01.2018 թվականից մինչ այսօր հոլթեր սարք չի ստուգաչափվել:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրենի
պաշտոնակատար ***ՀԱՅԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ***

Կատարող՝ Ք. Սուջյան, Ս. Մադաթյան
Հեռ. +37410 23 26 00 (165)